

Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2012 թ.  
հոկտեմբերի 18-ի նիստի N 42  
արձանագրային որոշման

(Գործառնություն թիվ 43826)

## ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(Հայաստանի հյուսիսային սահմանակետերի արդիականացման ծրագիր)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

և

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ

միջև

Վարկային Համաձայնագրի սույն նախագիծը մշակվել է միայն նախնական քննարկումների նպատակների համար: **Հնարավոր է, որ ավելացվեն լրացուցիչ պայմաններ և սույն տեքստը ենթակա է փոփոխման և Վերակառուցման և զարգացման Եվրոպական Բանկի կողմից վերջնական հաստատման:**

Ամսաթիվ 2012թ. [\_\_\_\_\_]

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾ I - ՍՏԱՆԴԱՐՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ .....	4
Բաժին 1.01. Ստանդարտ Պայմանների ներառումը.....	4
Բաժին 1.02. Սահմանումներ.....	4
Բաժին 1.03. Մեկնաբանություն .....	7
ՀՈԴՎԱԾ II - ՎԱՐԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ .....	7
Բաժին 2.01. Գումար և արժույթ.....	7
Բաժին 2.02. Վարկի այլ ֆինանսական պայմաններ .....	7
Բաժին 2.03. Օգտագործումներ.....	8
Բաժին 2.04. Օգտագործումներ կատարելու համար լիազորված ներկայացուցիչ.....	8
ՀՈԴՎԱԾ III - ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ .....	9
Բաժին 3.01. Ծրագրի այլ հաստատական պայմաններ .....	9
Բաժին 3.02. Ծրագրի իրականացման գրասենյակ .....	9
Բաժին 3.03. Գնումներ .....	9
Բաժին 3.04. Բնապահպանական և սոցիալական համապատասխանության պայմաններ.....	10
Բաժին 3.05. Խորհրդատուներ.....	11
Բաժին 3.06. Հաշվետվողականության հաճախականությունը և ներկայացման նկատմամբ պահանջները .....	12
ՀՈԴՎԱԾ IV - ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ .....	16
Բաժին 4.01. Ֆինանսական գրանցումներ և հաշվետվություններ.....	16
ՀՈԴՎԱԾ V - ԿԱՍԵՑՈՒՄ, ԿՐՃԱՏՈՒՄ, ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ .....	17
Բաժին 5.01. Կասեցում.....	17
Բաժին 5.02. Մարման ժամկետի կրճատում .....	17
ՀՈԴՎԱԾ VI - ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ .....	17
Բաժին 6.01. Ուժի մեջ մտնելուն նախորդող պայմաններ .....	17
Բաժին 6.02. Իրավաբանական եզրակացություններ.....	18
Բաժին 6.03. Ուժի մեջ չմտնելու պատճառով դադարում.....	18
ՀՈԴՎԱԾ VII - ԱՅԼ .....	18
Բաժին 7.01. Ծանուցումներ .....	18
ՀԱՎԵԼՎԱԾ 1 - ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ .....	1
ՀԱՎԵԼՎԱԾ 3 – ՍԱՀՄԱՆԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ .....	1
ՀԱՎԵԼՎԱԾ 4 – ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ .....	1

## ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ** ամսաթիվ [\_\_\_\_\_] 2012թ. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ** («Վարկառու») և **ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ** («Բանկ») միջև:

### ՆԱԽԱԲԱՆ

Բանկը հիմնադրվել է տրամադրելու ֆինանսավորում կոնկրետ ծրագրերի համար՝ խրախուսելու անցումը բաց շուկայական կողմնորոշմամբ տնտեսությունների և խթանելու մասնավոր ու ձեռնարկատիրական նախաձեռնությունները Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում, որոնք ստանձնել են հանձնառություն և կիրառում են բազմակուսակցական ժաղավրդավարության, բազմակարծության և շուկայական տնտեսության սկզբունքները,

Վարկառուն մտադրված է իրականացնել Ծրագիրն, ինչպես նկարագրված է Հավելված 1-ում, որը մշակված է օժանդակելու Վարկառուին՝ Վարկառուի և Վրաստանի միջազգային սահմանի երկայնքով ընկած սահմանային հսկողության երեք անցակետերի, այդ թվում նաև մինչև անցակետերը տանող համապատասխան ճանապարհային ենթակառուցվածքի արդիականացման գործընթացում,

Վարկառուն Բանկից խնդրել է օժանդակություն Ծրագրի մի մասի ֆինանսավորման համար («ՎՋԵԲ-ի Բաղադրիչը» սահմանվում է ստորև)՝ ֆինանսավորելու Հայաստանի և Վրաստանի միջև գտնվող Բագրատաշենի սահմանային հսկողության անցակետում կամրջի կառուցումը՝ որպես Ծրագրի անբաժանելի բաղադրիչ, ինչպես նկարագրված է Հավելված 1-ում,

Վարկառուն համաձայնագրեր է կնքել՝ ստանալու վարկ Եվրոպական Ներդրումային Բանկից՝ 30,316,000 Եվրո գումարի չափով («ԵՆԲ-ի Վարկային Համաձայնագիր») և 800,000 Եվրո գումարի չափով դրամաշնորհ Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրից, և պատրաստվում է համաձայնագրեր կնքել՝ ստանալու դրամաշնորհ Եվրոպական Միության Հարևանության Ներդրումային Ծրագրից՝ 12,000,000 Եվրո գումարի չափով և դրամաշնորհ Եվրոպական Միության կողմից՝ 3,300,000 Եվրո գումարի չափով՝ աջակցելու Ծրագրի ֆինանսավորմանը, համաձայն պայմանների, որոնք սահմանված են Վարկառուի և Համաֆինանսավորողների միջև համաձայնագրերում, և

Բանկը համաձայնել է, *inter alia* (ի թիվս այլոց), վերոհիշյալի հիման վրա, տրամադրել վարկ Վարկառուին 10,300,000 Եվրո գումարի չափով, համաձայն պայամանների, որոնք սահմանված են կամ որոնց հղում է արվում սույն Համաձայնագրում:

Կողմերը սույնով համաձայնում են հետևյալի մասին.

## **ՀՈԴՎԱԾ I – ՍՏԱՆԴԱՐՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ**

### **Բաժին 1.01. Ստանդարտ Պայմանների ներառումը**

Բանկի՝ 2007թ. հոկտեմբերի 1-ով թվագրված Ստանդարտ Պայմանների բոլոր դրույթները սույնով ներառվում ու դառնում են կիրառելի սույն Համաձայնագրի նկատմամբ նույն ուժով ու գործողությամբ, եթե դրանք ամբողջությամբ սահմանվեին այստեղ, սակայն ենթակա են հետևյալ փոփոխությունների (այդպիսի փոփոխված դրույթները այսուհետ կոչվում են «Ստանդարտ Պայմաններ»).

(ա) Ստանդարտ Պայմանների Բաժին 3. 04(գ)(1)(Բ)-ն պետք է, սույն Համաձայնագրի նպատակներով, փոփոխվի հետևյալ կերպով. «Վարկի մայր գումարը, որը Փոփոխվող Տոկոսադրույքից անցնում է Ֆիքսված Տոկոսադրույքի, չպետք է լինի պակաս, քան 1,000,000 Եվրոյի համարժեքը Վարկի արժույթով»:

### **Բաժին 1.02. Սահմանումներ**

Որտեղ որ օգտագործվում են սույն Համաձայնագրում (ներառյալ Նախաբանն ու Հավելվածները)՝ եթե այլ բան չի նախատեսված կամ համատեքստը այլ բան չի նախատեսում, Նախաբանում սահմանված տերմիններն ունեն համապատասխան իմաստները, որոնք տրված են դրանց այնտեղ, Ստանդարտ Պայմաններում սահմանված տերմիններն ունեն համապատասխան իմաստները, որոնք տրված են դրանց այնտեղ, իսկ հետևյալ տերմիններն ունեն հետևյալ իմաստները.

«Վարկառուի լիազորված

ներկայացուցիչ» նշանակում է Վարկառուի Ֆինանսների Նախարարություն:

«Կատարողականի  
Նախորոշված

Պահանջներ»

նշանակում է Կատարողականի Պահանջներ՝ 1-ից մինչև 8-ը և 10-ը (կամ, եթե համատեքստը այդպես է պահանջում, Կատարողականի այդ Պահանջներից յուրաքանչյուրը), 2008թ. մայիսին թվագրված Կատարողականի Պահանջներից, և կապված Բանկի՝ 2008թ. մայիսին թվագրված Բնապահպանական և Սոցիալական Քաղաքականության հետ:

«ՎՋԵԲ-ի Բաղադրիչ»

նշանակում է Ծրագրի այն մասը, որը ֆինանսավորվել է Բանկի կողմից Վարկային Համաձայնագրի ներքո, ինչպես նկարագրված է Հավելված 1-ի 2-րդ կետում:

«Բնապահպանական և  
Սոցիալական  
Գործողությունների  
Պլան»

նշանակում է բնապահպանական և սոցիալական ազդեցության մեղմացման և բարելավման միջոցառումներ, որոնք կից ներկայացված են Հավելված 4-ում, և այդ պլանը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել Բանկի նախնական գրավոր համաձայնությամբ, համաձայն Բաժին 3.04(գ)-ի:

«Բնապահպանական  
և  
Սոցիալական Օրենք»

նշանակում է որևէ գործող օրենք կամ կանոնակարգ, որը վերաբերում է.

(ա) շրջակա միջավայրի աղտոտմանը կամ պաշտպանությանը, այդ թվում նաև դրա հետ կապված օրենքներին կամ կանոնակարգերին, որոնք կապված են հանրության համար տեղեկատվության հասանելիության ու որոշումների կայացմանը մասնակցության հետ,

(բ) աշխատանքի և զբաղվածության պայմաններին,

(գ) մասնագիտական առողջապահությանն ու անվտանգությանը,

(դ) հանրային առողջապահությանը, անվտանգությանն ու ապահովությանը,

(ե) բնիկ ժողովուրդներին,

(զ) մշակութային ժառանգությանը, կամ

(է) անձանց վերաբնակեցմանը կամ տնտեսական տեղահանմանը:

«Բնապահպանական և

Սոցիալական Հարց» նշանակում է որևէ հարց, որը հանդիսանում է որևէ Բնապահպանական և Սոցիալական Օրենքի, որևէ Կատարողականի Նախորոշված Պահանջների կամ Բնապահպանական և Սոցիալական Գործողությունների Պլանի առարկա:

«Ֆինանսական տարի» նշանակում է Վարկառուի՝ յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ին սկսվող ֆինանսական տարին:

“Սահմանի միասնական կառավարման ծրագիր” նշանակում է Հավելված 3-ում սահմանված ծրագիր:

«Ծրագրի Իրականացման Սուբյեկտ» նշանակում է Հայաստանի Հանրապետության Տրանսպորտի և կապի նախարարություն:

«Ծրագրի Իրականացման Գրասենյակ» նշանակում է ծրագրի իրականացման գրասենյակ, որին հղում է արվում Բաժին 3.02-ում և որը պետք է ստեղծվի Վարկառուի կողմից:

### **Բաժին 1.03. Մեկնաբանություն**

Սույն Համաձայնագրում հղումը կոնկրետ Հոդվածին, Բաժնին կամ Հավելվածին պետք է, բացի այն դեպքերից, երբ այլ բան է նախատեսվում սույն Համաձայնագրում, մեկնաբանվի որպես հղում սույն Համաձայնագրի այդ կոնկրետ Հոդվածին կամ Բաժնին կամ Հավելվածին:

## **ՀՈԴՎԱԾ II – ՎԱՐԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

### **Բաժին 2.01. Գումար և արժույթ**

Բանկը համաձայնում է վարկի տեսքով տրամադրել Վարկառուին, սույն Համաձայնագրում սահմանված կամ հղվող պայմաններով, 10,300,000 Եվրո գումար:

### **Բաժին 2.02. Վարկի այլ ֆինանսական պայմաններ**

- (ա) Օգտագործման Նվազագույն Գումարը պետք է լինի 100,000 Եվրո:
- (բ) Վարկի վաղաժամկետ մարման Նվազագույն Գումարը պետք է լինի 500,000 Եվրո:
- (գ) Չեղյալ Հայտարարման Նվազագույն Գումարը պետք է լինի 500,000 Եվրո:
- (դ) Տոկոսագումարների Վճարման Ամսաթվերը պետք է լինեն յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ը և հոկտեմբերի 16-ը,
- (ե) (1) Վարկառուն պետք է մարի Վարկը քսանչորս հավասար (կամ հնարավորինս հավասար) կիսամյակային վճարումներով յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ին և հոկտեմբերի 16-ին, և Վարկի Առաջին Մարման Ամսաթիվը պետք է լինի 2016թ. ապրիլի 16-ը, իսկ Վարկի Վերջին Մարման Ամսաթիվը պետք է լինի 2027թ. հոկտեմբերի 16-ը:  
  
(2) Չնայած վերոհիշյալին՝ այն դեպքում, եթե (i) Վարկառուն չի օգտագործում Վարկի ամբողջ գումարը մինչև Վարկի Առաջին Մարման Ամսաթիվը, որը նշված է սույն Բաժին 2.02.(ե)-ում, և (ii) Բանկը երկարաձգում է Հասանելիության Վերջին Ամսաթիվը, որը նշված է Բաժին 2.02.(գ)-ում ստորև, մինչև որևէ ամսաթիվ, որն ընկնում է Վարկի այդ Առաջին Մարման Ամսաթվից հետո, ապա Վարկի Առաջին Մարման Ամսաթիվին կամ դրանից հետո կատարվող յուրաքանչյուր օգտագործման գումարը պետք է բաշխվի մարման համար՝ հավասար գումարների չափով Վարկի Մարման մի քանի Ամսաթվերի վրա, որոնք

ընկնում են այդ օգտագործման ամսաթվից հետո (և Բանկը ճշգրտում է այդ կերպ բաշխված գումարները ըստ անհրաժեշտության՝ հասնելու յուրաքանչյուր դեպքում կլոր թվերի): Բանկը պետք է ժամանակ առ ժամանակ ծանուցի Վարկառուին այդպիսի բաշխումների մասին:

(գ) Հասանելիության Վերջին Ամսաթիվը պետք է լինի այն ամսաթիվը, որը համընկնում է Վարկային Համաձայնագրի ամսաթվի երրորդ տարեդարձի հետ կամ ավելի ուշ ընկնող որևէ ամսաթիվ, որը Բանկը կարող է իր հայեցողությամբ սահմանել և ծանուցել Վարկառուին: Եթե Վարկի Հասանելի Գումարը կամ դրա որևէ մասը ենթակա են Ամրագրված Տոկոսադրույքի, և Բանկը հետաձգում է Հասանելիության Վերջին Ամսաթիվը, Վարկառուն պետք է անհապաղ վճարի Բանկին Պայմանների փոփոխության հետ կապված ծախսերի այնպիսի մի մաս, որի մասին Բանկը կարող է ժամանակ առ ժամանակ գրավոր տեսքով ծանուցել Վարկառուին:

(ե) Հանձնառության Վճարի դրույքը պետք է լինի 0.5 տոկոս տարեկան:

(ը) Վարկը ենթակա է Փոփոխվաղ Տոկոսադրույքի: Չնայած վերոհիշյալին, Վարկառուն կարող է, որպես այդ պահին դեռ չմարված Վարկի ողջ գումարի կամ դրա մի մասի վրա Փոփոխվաղ Տոկոսադրույքով տոկոսի վճարման այլընտրանք ընտրել (i) վճարել տոկոսագումարները Վարկի մի մասի համար Ամրագրված Տոկոսադրույքով, Ստանդարտ Պայմանների Բաժին 3.04(գ) կետի համաձայն, կամ (ii) այլ հիմունքներով, որոնք Բանկը կարող է իր սեփական հայեցողությամբ առաջարկել:

### **Բաժին 2.03. Օգտագործումներ**

Հասանելի Գումարը կարող է օգտագործվել ժամանակ առ ժամանակ՝ համաձայն Հավելված 2-ի դրույթների՝ ֆինանսավորելու (1) ՎՋԵԲ-ի Բաղադրիչի համար պահանջվող ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների խելամիտ գների կապակցությամբ կատարված (կամ, եթե Բանկը համաձայնում է, կատարվելիք) ծախսումները և (2) Մեկնարկային Կոմիսիոն Վճարը:

### **Բաժին 2.04. Օգտագործումները կատարող լիազորված ներկայացուցիչ**

Վարկառուի Ֆինանսների Նախարարը նշանակվում է Վարկառուի լիազորված ներկայացուցիչ՝ Ստանդարտ Պայմանների Բաժին 2.03(1)-ի և Բաժիններ 3.01 և 3.02-ի դրույթների ներքո պահանջվող կամ թույլատրելի որևէ գործողություն ձեռնարկելու նպատակով:



## ՀՈԴՎԱԾ III – ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

### **Բաժին 3.01. Ծրագրի այլ հաստատական պայմաններ**

Բացի Ստանդարտ Պայմանների Հոդված IV-ում սահմանված ընդհանուր հանձնառություններից, Վարկառուն պետք է, եթե Բանկն այլ բան չի նախատեսում.

(ա) Ձեռնարկի բոլոր գործողությունները, որոնք անհրաժեշտ են՝ Ծրագրի իրականացման համար համապատասխան ֆինանսավորում տրամադրելու նպատակով,

(բ) Օգտագործի Վարկի միջոցները բացառապես ՎՋԵԲ-ի Բաղադրիչի իրականացման համար, համաձայն Հավելված 1-ի,

(գ) Իրականացնի Ծրագիրը պատշաճ բարեխղճությամբ և արդյունավետությամբ, համաձայն հուսալի ինժեներական, ֆինանսական և բիզնես պրակտիկաների և բոլոր գործող օրենքների, և հաշվի առնելով բնապահպանական, առողջապահական և անվտանգության ասպեկտները, ինչպես նաև համաձայն ընդունելի միջազգային չափանիշների և պրակտիկաների,

(դ) Իրականացնի Սահմանի Միասնական Կառավարման Ծրագրի հիմնական փուլերի նպատակները, համաձայն Հավելված 3-ի,

(ե) Ստանա, պահպանի, նորացնի բոլոր անհրաժեշտ լիցենզիաները, հաստատումներն ու գրանցումները և համապատասխանի դրանց:

### **Բաժին 3.02. Ծրագրի Իրականացման Գրասենյակ**

Ծրագրի իրականացման բոլոր ասպեկտները, այդ թվում նաև Ծրագրի համար աշխատանքների, ապրանքների և ծառայությունների գնումները, համակարգելու, կառավարելու, վերահսկելու և գնահատելու նպատակով Վարկառուն պետք է, եթե այլ բան չի համաձայնեցվել Բանկի հետ, ստեղծի և Ծրագրի կատարման ամբողջ ընթացքում աշխատացնի ծրագրի իրականացման գրասենյակ՝ բավարար ռեսուրսներով և համապատասխան որակավորում ունեցող աշխատակազմով, Բանկի համար ընդունելի աշխատանքային պայմաններով:

### **Բաժին 3.03. Գնումներ**

Ստանդարտ Պայմանների Բաժին 4.03-ի նպատակներով հետևյալ դրույթները պետք է կարգավորեն, եթե Բանկն այլ բան չի նախատեսում,

ՎՋԵԲ-ի Բաղադրիչի համար պահանջվող և Վարկի միջոցներից ֆինանսավորվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումները.

(ա) Ապրանքները, աշխատանքներն ու ծառայությունները (բացի խորհրդատուների ծառայություններից, որոնք ներառված են Բաժին 3.03(գ)-ում) պետք է գնվեն բաց մրցույթի միջոցով:

(բ) Բաժին 3.03(ա)-ի նպատակներով՝ բաց մրցույթների ընթացակարգերը սահմանված են ՎՋԵԲ-ի՝ Գնումների Կանոնների Գլուխ 3-ում:

(գ) ՎՋԵԲ-ի Բաղադրիչի իրականացմանը աջակցելու համար Վարկառուի կողմից ներգրավելիք խորհրդատուները պետք է ընտրվեն համաձայն ՎՋԵԲ-ի՝ Գնումների Կանոնների Գլուխ 5-ում սահմանված ընթացակարգերի:

(դ) Բոլոր պայմանագրերը ենթակա են վերանայման կարգերի, որոնք սահմանված են ՎՋԵԲ-ի՝ Գնումների Կանոններում, և պայմանագրերը ենթակա են Բանկի կողմից նախնական վերանայման:

### **Բաժին 3.04. Բնապահպանական և Սոցիալական համապատասխանության պայմաններ**

Առանց սահմանափակելու Ստանդարտ Պայմանների Բաժիններ 4.02(ա), 4.04(ա)(iii), և 5.02(գ)(iii)-ի համընդհանրությունը, և եթե Բանկն այլ բան չի նախատեսում.

(ա) Բացի այն դեպքերից, երբ այլ բան է նախատեսված Բնապահպանական և Սոցիալական Գործողությունների Պլանում, Վարկառուն պետք է իրականացնի և պետք է դրդի Ծրագրի Իրականացման Սուբյեկտին և յուրաքանչյուր կապալառուին՝ իրականացնել ՎՋԵԲ-ի Բաղադրիչը, համաձայն Կատարողականի Նախորոշված Պահանջների,

(բ) Առանց սահմանափակելու վերոհիշյալ՝ Վարկառուն պետք է ապահովի, որպեսզի Ծրագրի Իրականացման Սուբյեկտը բարեխղճորեն իրականացնի և հետևի Բնապահպանական և Սոցիալական Գործողությունների Պլանին և կատարի այդ պլանի մոնիտորինգ, համաձայն այդ պլանում պարունակվող՝ մոնիտորինգի մասին դրույթների:

(գ) Վարկառուն և Բանկը կարող են ժամանակ առ ժամանակ համաձայնել և փոփոխել Բնապահպանական և Սոցիալական Գործողությունների Պլանը՝ ի պատասխան Ծրագրի կամ Վարկառուի կամ Ծրագրի Իրականացման Սուբյեկտի հանգամանքների փոփոխություններին, չկանխատեսված իրադարձություններին և մոնիտորինգի արդյունքներին, այդ թվում նաև որևէ

աուդիտի արդյունքներին: Առանց սահմանափակելու վերոհիշյալի համընդհանրությունը՝ Վարկառուն պետք է ապահովի, որպեսզի Ծրագրի Իրականացման Սուբյեկտը, հենց որ դա խելամիտ և իրագործելի լինի, և եթե Բանկը համաձայնի, մշակի և Բնապահպանական և Սոցիալական Գործողությունների Պլանում ներառի այնպիսի լրացուցիչ կամ վերանայված մեղմացման միջոցառումներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել Կատարողականի Նախորոշված Պահանջներին համապատասխանելու համար, յուրաքանչյուր դեպքում Բանկի համար բավարար կերպով:

- (1) Եթե առկա է որևէ բացասական բնապահպանական կամ սոցիալական ազդեցություն կամ խնդիր, որը չէր կանխատեսվել կամ նախատեսվել Բնապահպանական և Սոցիալական Գործողությունների Պլանում ամբողջությամբ կամ ըստ դրա սրության,
- (2) Եթե Բնապահպանական և Սոցիալական Գործողությունների Պլանում սահմանված ազդեցության մեղմացման որևէ միջոց բավարար չէ բնապահպանական կամ սոցիալական ազդեցությունը մինչև համապատասխան Կատարողականի Նախորոշված Պահանջներով նախատեսված մակարդակը Բնապահպանական և Սոցիալական Գործողությունների Պլանում սահմանված ժամանակահատվածում նվազեցնելու համար:

և

(դ) Վարկառուն պետք է դրդի, որպեսզի Ծրագրի Իրականացման Սուբյեկտը իրականացնի Ծրագիրը, համապատասխան կերպով հաշվի առնելով շրջակա միջավայրը և հանրային և մասնագիտական առողջապահության, անվտանգության և աշխատանքի չափորոշիչները: Եթե Բնապահպանական և Սոցիալական Գործողությունների Պլանն այլ կերպ չի նախատեսում, Վարկառուն պետք է դրդի, որպեսզի Ծրագրի Իրականացման Սուբյեկտը կատարի ՎՋԵԲ-ի Բաղադրիչը համաձայն բնապահպանական կանոնների և չափանիշների, որոնք ժամանակ առ ժամանակ ուժի մեջ են մտնում այն իրավասության շրջանում, որտեղ տեղակայված է Ծրագիրը, և համաձայն Եվրոպական Միությունում սույն ամսաթվին առկա բնապահպանական չափանիշների:

### **Բաժին 3.05. Խորհրդատուներ**

(ա) ՎՋԵԲ-ի Բաղադրիչի իրականացմանը աջակցելու նպատակով Վարկառուն պետք է, եթե այլ բան համաձայնեցված չէ Բանկի հետ, ներգրավի կամ, երբ անհրաժեշտ է, դրդի, որ ներգրավվեն խորհրդատուներ, և օգտագործի այնպիսի խորհրդատուներ, որոնց որակավորումները,

փորձառությունը և աշխատանքային պայմանները բավարար են Բանկի համար, ներառյալ այն խորհրդատուներին, որոնք աջակցելու են ԾԻԳ-ին:

(բ) Վարկառուն պետք է տրամադրի, անվճար, ՎՋԵԲ-ի Բաղադրիչի կամ Վարկառուի գործունեության հետ կապված հարցերում օժանդակելու համար ներգրավված որևէ խորհրդատուներին աջակցություն և բոլոր հարմարությունները, որոնք անհրաժեշտ կլինեն նրանց գործառույթների իրականացման համար, ներառյալ գրասենյակային տարածք, պատճենահանման սարք, պիտույքներ և քարտուղարի ծառայություններ, ինչպես նաև բոլոր փաստաթղթերը, նյութերն ու այլ տեղեկատվությունը, որոնք կարող են կապված լինել նրանց աշխատանքի հետ:

**Բաժին 3.06. Հաշվետվողականության հաճախականությունը և ներկայացման նկատմամբ պահանջները**

(ա) Սկսած Ուժի մեջ մտնելու Ամսաթվից մինչև Վարկի ամբողջ գումարի մարվելը կամ չեղյալ հայտարարվելը, Վարկառուն պետք է Բանկին ներկայացնի տարեկան հաշվետվություններ Բնապահպանական և Սոցիալական Հարցերի վերաբերյալ, որոնք ծագում են Վարկառուի կամ ՎՋԵԲ-ի Բաղադրիչի առնչությամբ, հաշվետու տարվա ավարտից հետո 90 օրվա ընթացքում: Այդ հաշվետվությունները պետք է ներառեն տեղեկատվություն հետևյալ կոնկրետ հարցերի վերաբերյալ.

(1) տեղեկատվություն, թե որքանով է Ծրագրի Իրականացման Սուբյեկտը համապատասխանում Կատարողականի Նախորոշված Պահանջներին, ինչպես նշված է Բաժին 3.04(ա)-ում, և ինչպես է ընդհանում Բնապահպանական և Սոցիալական Գործողությունների Պլանի իրականացումը,

(2) տեղեկատվություն, թե ինչպես է Ծրագրի Իրականացման Սուբյեկտը անցկացրել ՎՋԵԲ-ի Բաղադրիչի համար ներգրավված որևէ կապալառուի՝ Կատարողականի Նախորոշված Պահանջներին և Բնապահպանական և Սոցիալական Գործողությունների Պլանին համապատասխանության մոնիտորինգ, ինչպես անև Կատարողականի Նախորոշված Պահանջներին և Բնապահպանական և Սոցիալական Գործողությունների Պլանին այդպիսի կապալառուի կողմից որևէ էական անհամապատասխանության և այդ անհամապատասխանության վերացման համար ձեռնարկված որևէ միջոցների ամփոփագիր,

(3) տեղեկատվություն շահագրգիռ կողմերի ներգրավման պլանի իրականացման վերաբերյալ, որը պահանջվում է համաձայն

Կատարողականի Նախորոշված Պահանջ 10-ի, ներառյալ ստացված որևէ բողոքների և դրանց լուծումների ամփոփագիր,

(4) տեղեկատվություն, թե որքանով է Ծրագրի Իրականացման Սուբյեկտը համապատասխանում Ծրագրի հետ կապված Բնապահպանական և Սոցիալական Օրենքներին, ներառյալ Ծրագրի համար պահանջվող որևէ Լիազորման կարգավիճակը, որևէ կարգավորող մարմնի կողմից իրականացված որևէ ստուգման արդյունքները, գործող օրենքների, կանոնակարգերի կամ չափորոշիչների որևէ խախտում, և այդպիսի խախտման հետ կապված որևէ շտկող գործողություն կամ տույժ, և որևէ կարգավորող մարմնին Ծրագրի Իրականացման Սուբյեկտի կողմից ներկայացված՝ Ծրագրի հետ կապված Բնապահպանական և Սոցիալական Հարցերի վերաբերյալ որևէ էական ծանուցման, հաշվետվության և այլ հաղորդակցության ամփոփագիր,

(5) տեղեկատվություն մասնագիտական առողջապահական ու անվտանգության կառավարման և Ծրագրի՝ մասնագիտական առողջապահական ու անվտանգության մասին գրանցումները, ներառյալ վթարների ցուցանիշը, աշխատունակության ժամանակավոր կորստով ուղեկցվող վնասվածքներ, անհաջող փորձեր, և Ծրագրի Իրականացման Սուբյեկտի կողմից ձեռնարկված կամ պլանավորվող որևէ կանխարգելիչ կամ ազդեցությունը մեղմացնող միջոցներ, անձնակազմի որևէ վերապատրաստում մասնագիտական առողջապահության ու անվտանգության վերաբերյալ և մասնագիտական առողջապահության ու անվտանգության կառավարման հետ կապված որևէ այլ նախաձեռնություններ, որոնք իրականացվել կամ պլանավորվել են Ծրագրի Իրականացման Սուբյեկտի կողմից,

(6) Բնապահպանական և Սոցիալական Օրենքների որևէ փոփոխությունների ամփոփագիր, որոնք կարող են ունենալ էական ազդեցություն Ծրագրի վրա,

(7) Վարկառուի կողմից իր բաժնետերերին կամ հանրությանը Բնապահպանական և Սոցիալական Հարցերի վերաբերյալ պարբերաբար ներկայացվող որևէ տեղեկատվության պատճեններ:

(բ) Սկսած Ուժի մեջ մտնելու ամսաթվից, Վարկառուն պետք է ապահովի, որպեսզի Ծրագրի Իրականացման Սուբյեկտը եռամսյակը մեկ ներկայացնի Ծրագրի պարբերական հաշվետվություններ, որոնց հղում է արվում Ստանդարտ Պայմանների Բաժին 4.04(ա)(iv)-ում, հաշվետու ժամանակահատվածի ավարտից հետո 30 օրվա ընթացքում և մինչև ՎՋԵԲ-

ի Բաղադրիչի իրականացման ավարտը: Այդ հաշվետվությունները պետք է ներառեն հետևյալ կոնկրետ բնութագրերը.

(1) Հետևյալ ընդհանուր տեղեկատվությունը.

(Ա) մինչև հաշվետվության ամսաթիվը և հաշվետու ժամանակահատվածում ՎՋԵԲ-ի Բաղադրիչի իրականացման ֆիզիկական առաջընթացը,

(Բ) Ծրագրի իրականացման փաստացի կամ սպասվող դժվարությունները կամ ձգձգումները և դրանց ազդեցությունը իրականացման ժամանակացույցի վրա, ինչպես նաև դժվարությունները հաղթահարելու և ձգձգումներից խուսափելու համար ձեռնարկված փաստացի կամ պլանավորված քայլերը,

(Գ) Ծրագրի ավարտի ամսաթվի սպասվող փոփոխություններ,

(Դ) ԾԻԳ-ի, խորհրդատուների կամ կապալառուների անձնակազմի կարևոր փոփոխություններ,

(Ե) հարցեր, որոնք կարող են ազդել ՎՋԵԲ-ի Բաղադրիչի արժեքի վրա, և

(Զ) որևէ զարգացում կամ գործունեություն, որը հավանական է, որ ազդի Ծրագրի որևէ Մասի տնտեսական կենսունակության վրա:

(2) Ֆինանսական հաշվետվություններ, որոնք ցույց են տալիս ՎՋԵԲ-ի Բաղադրիչի յուրաքանչյուր Մասի շրջանակներում կատարված ծախսումների և Օգտագործումների մանրամասները՝ հաշվետվության հետ միասին, որը ցույց է տալիս.

(Ա) ծախսերի սկզբնական նախահաշիվը,

(Բ) ծախսերի վերանայված նախահաշիվը, եթե առկա են, փոփոխությունների պատճառների հետ միասին,

(Գ) սկզբնական գնահատված ծախսումները և մինչև տվյալ պահը փաստացի ծախսումները,

(Դ) մինչև տվյալ պահը փաստացի ծախսումների սկզբնական՝ մինչև տվյալ պահի համար գնահատված ծախսումներից շեղումների պատճառները,

(Ե) տարվա մնացած եռամսյակների համար գնահատված ծախսումները:

(գ) Սկսած Ուժի մեջ մտնելու Ամսթվից, մինչև ավելի վաղ ամսաթիվը, երբ (i) Վարկի Մայր գումարը և բոլոր տոկոսագումարները, վճարները և սույն համաձայնագրի ներքո վճարման ենթակա այլ գումարները ամբողջությամբ մարվել կամ չեղյալ են հայտարարվել, և (ii) Սահմանի Միասնական Կառավարման Պլանը ամբողջությամբ իրականացվել է, Վարկառուն պետք է ապահովի, որպեսզի Ծրագրի Իրականացման Սուբյեկտը ներկայացնի Բանկին, Վարկառուի յուրաքանչյուր Ֆինասական տարվա ավարտից հետո 90 օրվա ընթացքում, տարեկան հաշվետվություն Սահմանի Միասնական Կառավարման Պլանի իրականացման վերաբերյալ և առ այն, թե որքանով են իրականացվել Հավելված 3-ում նախանշված հիմնական փուլերը:

(դ) Ծրագրին առնչվող որևէ պատահարի կամ վթարի, որն ունի կամ հավանաբար կունենա զգալի բացասական ազդեցություն շրջակա միջավայրի կամ հանրային կամ մասնագիտական առողջապահության կամ անվտանգության վրա, տեղ գտնելուց հետո Վարկառուն պետք է ապահովի, որ Ծրագրի Իրականացման Սուբյեկտը տեղեկացնի Բանկին և անմիջապես դրանից հետո Բանկին ծանուցում տրամադրի դրա վերաբերյալ՝ նշելով այդ պատահարի կամ վթարի բնույթը և քայլերը, որոնք Վարկառուն ձեռնարկում է դրանք շտկելու համար: Առանց սահմանափակելու վերոհիշյալի համընդհանրությունը,

(1) Պատահարը կամ վթարը կապված է Ծրագրի հետ, եթե այն տեղ է գտնում որևէ տարածքում, որը օգտագործվում է Ծրագրի համար կամ եթե դրա պատճառ են հանդիսացել շինությունները, սարքավորումը, տրանսպորտային միջոցները կամ նավերը, որոնք օգտագործվում են Ծրագրի համար կամ առնչությամբ (անկախ նրանից, թե օգտագործվում են լիազորված, թե չլիազորված անձանց կողմից),

(2) Համարվում է, որ պատահարը կամ վթարը ունի զգալի բացասական ազդեցություն շրջակա միջավայրի կամ հանրային կամ մասնագիտական առողջապահության կամ անվտանգության վրա, եթե.

(Ա) որևէ գործող օրենք պահանջում է նման պատահարի կամ վթարի մասին ծանուցել որևէ պետական մարմնի,

(Բ) այդ պատահարը կամ վթարը ներառում է որևէ անձի մահ (անկախ նրանից, թե այդ անձը Վարկառուի աշխատողն է, թե ոչ),

(Գ) մեկից ավելի անձինք (անկախ նրանից, թե այդ անձինք Վարկառուի աշխատողներն են, թե ոչ) ստացել են լուրջ վնասվածքներ, որոնք պահանջում են հոսպիտալիզացիա, կամ

(Գ) այդ պատահարը կամ վթարը դարձել է կամ հնարավոր է, որ դառնա, հայտնի հանրությանը ՁԼՄ-ների միջոցով կամ այլ կերպ:

(ե) Վարկառուն պետք է ապահովի, որպեսզի Ծրագրի Իրականացման Սուբյեկտը անհապաղ Բանկին ծանուցի աշխատողների կամ հանրության ներկայացուցիչների որևէ զգալի բողոքի ակցիաների մասին, որոնք ուղղված կամ կապված են Վարկառուի կամ Ծրագրի հետ և կարող են ունենալ զգալի բացասական ազդեցություն Ծրագրի վրա կամ որոնց մասին հայտնի է դարձել հանրությանը կամ հնարավոր է, որ հայտնի դառնա, ՁԼՄ-ների միջոցով կամ այլ կերպ: Այդպիսի ծանուցումից հետո տաս օրվա ընթացքում, Վարկառուն պետք է ապահովի, որպեսզի Ծրագրի Իրականացման Սուբյեկտը ներկայացնի Բանկի համար բավարար հաշվետվություն, որտեղ նկարագրվում է Ծրագրի Իրականացման Սուբյեկտի կողմից կատարված՝ այդ բողոքի հետախուզման կոնկրետ արդյունքը և բողոքի ակցիայի ընթացքում բարձրացրած հարցերը լուծելու նպատակով Ծրագրի Իրականացման Սուբյեկտի կողմից ձեռնարկված կամ առաջարկվող քայլերը:

#### **ՀՈԴՎԱԾ IV - ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

##### **Բաժին 4.01. Ֆինանսական գրանցումներ և հաշվետվություններ**

(ա) Վարկառուն պետք է, Վարկառուի այն բաժինների և գործակալությունների նկատմամբ, որոնք պատասխանատու են Ծրագրի կամ դրա որևէ մասի իրականացման համար, վարի ընթացակարգեր, գրանցումներ և հաշիվներ, որոնք բավարար են՝ արտացոլելու, համաձայն ընդունված միջազգային հաշվապահական չափորոշիչների, որոնք հետևողականորեն կիրառվում են, այն գործառնությունները, ռեսուրսները և ծախսումները, որոնք վերաբերում են Ծրագրին, և բավարար են Ծրագրի մոնիտորինգը անցկացնելու և առաջընթացը գրանցելու համար (ներառյալ Ծրագրի ծախսերը և ակնկալվող շահերը):

(բ) Վարկառուն պետք է.

(1) կազմակերպի Բաժին 4.01(ա)-ում նշված յուրաքանչյուր Ֆինանսական Տարվա իր գրանցումների և հաշիվների աուդիտ, Բանկի համար ընդունելի ձևով՝ ըստ աուդիտի միջազգայնորեն ընդունված սկզբունքների և չափանիշների,

(2) տրամադրի Բանկին, երբ որ առկա է, սակայն ամեն դեպքում ոչ ուշ, քան տվյալ Ֆինանսական Տարվա ավարտից հետո վեց ամիս անց,



այդ աուդիտի հաշվետվությունը այդ աուդիտորների կողմից, այնպիսի ծավալով և մանրամասներով, որոնք Բանկը կարող է խելամիտ սահմաններում խնդրել ներկայացնել, և

(3) տրամադրի Բանկին այնպիսի այլ տեղեկատվություն այդ գրանցումների և հաշիվների և դրանց աուդիտի վերաբերյալ, որոնք Բանկը կարող է ժամանակ առ ժամանակ խելամիտ սահմաններում խնդրել ներկայացնել:

## **ՀՈԴՎԱԾ V – ԿԱՍԵՑՈՒՄ, ԺԱՄԿԵՏԻ ԿՐՃԱՏՈՒՄ, ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ**

### **Բաժին 5.01. Կասեցում**

Հետևյալը սահմանվում է Ստանդարտ Պայմանների Բաժին 7.01(ա)(xvii)-ի նպատակներով.

(ա) Վարկառուն կամ Ծրագրի Իրականացման Սուբյեկտը բոլոր նյութական ասպեկտներով չի կատարում ՎՋԵԲ-ի՝ Գնումների Կանոնները ՎՋԵԲ-ի Բաղադրիչի առումով:

### **Բաժին 5.02. Մարման ժամկետի կրճատում**

Հետևյալը սահմանվում է Ստանդարտ Պայմանների Բաժին 7.06(գ)-ի նպատակներով.

(ա) ՎՋԵԲ-ի Բաղադրիչը չի կատարվել համաձայն ՎՋԵԲ-ի՝ Գնումների Կանոնների:

## **ՀՈԴՎԱԾ VI – ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ**

### **Բաժին 6.01. Ուժի մեջ մտնելուն նախորդող պայմանները**

Հետևյալ պայմանները սահմանվում են Ստանդարտ Պայմանների Բաժին 9.02(գ)-ի նպատակներով՝ որպես լրացուցիչ պայմաններ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար.

(ա) ԵՆԲ-ի Վարկային Համաձայնագիրը պետք է կնքված և հանձնված լինի, և նրա՝ ուժի մեջ մտնելու կամ դրանցով նախատեսված օգտագործումներ կատարելու Վարկառուի իրավունքի բոլոր

նախապայմանները, բացի միայն սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց, բավարարված լինեն,

(բ) Ծրագրի իրականացման Գրասենյակը պետք է ստեղծված լինի և ունենա բավարար ռեսուրսներ և համապատասխան որակավորում ստացած աշխատակազմ, Բանկի համար ընդունելի աշխատանքային պայմաններով:

### **Բաժին 6.02. Իրավաբանական եզրակացություններ**

Ստանդարտ Պայմանների Բաժին 9.03(ա)-ի նպատակներով, իրավաբանի եզրակացությունը կամ եզրակացությունները պետք է տրվեն Վարկառուի անունից, Արդարադատության Նախարարի կողմից:

### **Բաժին 6.03. Ուժի մեջ չմտնելու պատճառով դադարում**

Սույն Համաձայնագրի ամսաթվից հետո 120 օր անց ամսաթիվը սահմանվում է Ստանդարտ Պայմանների Բաժին 9.04-ի նպատակներով:

## **ՀՈԴՎԱԾ VII - ԱՅԼ**

### **Բաժին 7.01. Ծանուցումներ**

Հետևյալ հասցեները սահմանվում են Ստանդարտ Պայմանների Բաժին 10.01-ի նպատակներով.

Վարկառուի համար.

Հայաստանի Հանրապետություն

Ուղղվում է. [\_\_\_\_\_]

Ֆաքս. [\_\_\_\_\_]

Տելեքս. [\_\_\_\_\_]

Ինքնապատասխանիչ. [\_\_\_\_\_]

Բանկի համար.

Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկ  
Ուան Իքսչեյնջ Աքուերր  
Լոնդոն EC2A 2JN  
Միացյալ թագավորություն

Ուղղվում է. Գործառնության կառավարման բաժին

Ֆաքս. +44-20-7338-6100

**Վերոհիշյալը հաշվի առնելով**, սույն փաստաթղթի կողմերը, գործելով իրենց պատշաճ կերպով լիազորվածված ներկայացուցիչների միջոցով, ստորագրել են սույն Համաձայնագիրը [չորս] օրինակից և հանձնել այն [Լոնդոնում, Անգլիա] վերը նշված ամսաթվին:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

---

Անուն.

Պաշտոն.

## **ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿ**

---

Անուն.

Պաշտոն.

## ՀԱՎԵԼՎԱԾ 1 – ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

1. Ծրագրի նպատակն է աջակցել Վարկառուին՝ Վարկառուի և Վրաստանի սահմանի երկայնքով ընկած սահմանային հսկողության երեք անցակետերի և մինչև անցակետերը տանող համապատասխան ճանապարհային ենթակառուցվածքի արդիականացման գործընթացում: Ծրագիրը համաֆինասավորվում է Համաֆինասավորողների կողմից և ունի ՎՋԵԲ-ի Բաղադրիչ, որը, ըստ ստորև բերված սահմանման, Ծրագրի անբաժանելի մաս է հանդիսանում:

2. ՎՋԵԲ-ի Բաղադրիչը բաղկացած է հետևյալ Մասերից, որոնք ենթակա են փոփոխման, եթե Բանկն ու Վարկառուն ժամանակ առ ժամանակ այդ մասին համաձայնեն.

Մաս Ա. Հայաստանի և Վրաստանի միջև գտնվող Բագրատաշենի սահմանային հսկողության անցակետի տարածքում նոր կամրջի կառուցում:

Մաս Բ. Խորհրդատվական ծառայություններ. ներառյալ վերահսկողության և մոնիտորինգի հարցերում աջակցություն, ինչպես նաև մոնիտորինգի հարցում ԾԻԳ-ին լրացուցիչ օգնություն:

Մաս Գ. Մեկնարկային վճար:

3. Ակնկալվում է Ծրագիրն ավարտի հասցնել սույն Համաձայնագրի ստորագրմանը հաջորդող երեք տարիների ընթացքում:

## **ՀԱՎԵԼՎԱԾ 2 – ԴԱՍԵՐ և ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄՆԵՐ**

1. Սույն Հավելվածին կից աղյուսակը նկարագրում է դասերը, յուրաքանչյուր դասին հատկացված Վարկի գումարի մասը և յուրաքանչյուր դասում ֆինանսավորվելիք ծախսումների տոկոսը:

2. Չնայած վերը բերված պարբերություն 1-ի դրույթներին՝ ոչ մի Օգտագործում չպետք է կատարվի հետևյալի առնչությամբ.

(1) Դաս Ա-ի ներքո ծախսումներ, միջև այն ժամանակը, երբ Բանկը ստանա բավարար ապացույց, որ Դաս Ա-ի ներքո կատարվելիք շինարարական աշխատանքների մրցույթի համար ներկայացված փաստաթղթերը ներառում են համապատասխան դրույթներ, որպեսզի կապալառուները համապատասխանեն Կատարողականի Նախորոշված Պահանջներին:

**Attachment to Schedule 2**

<b>Դաս</b>	<b>Վարկի գումարից հատկացված մասը Վարկի արժույթով</b>	<b>Ֆինանսավորվելիք ծախսումների տոկոսը</b>
(1) Շինարարական աշխատանքներ Մաս Ա-ի համար	9,847,000	Պայմանագրի արժեքի 100 %, առանց որևէ հարկերի
(2) Խորհրդատվական ծառայություններ Մաս Բ-ի համար	350,000	Պայմանագրի արժեքի 100 %, առանց որևէ հարկերի
(3) Մեկնարկային Կոմիսիոն Վճար	103,000	100%
<b>Ընդամենը</b>	<b>10,300,000</b>	

**ՀԱՎԵԼՎԱԾ 3 – ՍԱՀՄԱՆԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

<b>Գործողություն</b>	<b>Վերջնաժամկետ/Ոչ ուշ, քան.</b>
<p>1. Արդիականացված երեք սահմանային հսկողության անցակետերում (ՍՀԱ) ապահովել քանակային կարողությունները և շարունակապես համապատասխանել սահմանված թիրախներին:</p>	<p align="center">Մինչև 2015թ. վերջը</p>
<p>2. Վրաստանի հետ համապատասխան ՍՀԱ-ներում համագործակցության մասին Սահմանի հատման հատուկ համաձայնագրերի ստորագրում, որոնք կներառեն ՍՀԱ-ներում աշխատանքային ժամերը ներդաշնակեցնելու վերաբերյալ դրույթներ՝ մարդկանց և մեքենաների չընդհատվող շարժին նպաստելու նպատակով, ինչպես նաև չնախատեսված ծախսերի համատեղ պլանների կազմում այնպիսի արտակարգ իրավիճակների համար, ինչպիսիք են համաճարակները, մարդկանց մասսայական հոսքերը, երկրաշարժը:</p>	<p align="center">Մինչև 2015թ. վերջը</p>
<p>3. Տարեկան կտրվածքով պլանավորված նպատակների իրականացման համապատասխանությունը ՀՀ Սահմանային անվտանգության ընդհանուր գործողությունների պլանին և Պետական սահմանի միասնական կառավարման ռազմավարությանը.</p> <p align="center">ա. Առաջնահերթ</p>	<p align="center">Մինչև 2015թ. վերջը</p>



<p>գործողությունների իրականացման համապատասխանությունը պլանում նախանշված առաջնահերթ գործողություններին. 80</p> <p>տոկոսից ոչ պակաս, միջին առաջնահերթության գործողությունների համապատասխանությունը պլանում նախանշված միջին առաջնահերթության գործողություններին. 60</p> <p>տոկոսից ոչ պակաս:</p>	
---	--

<p>4. ՀՀ Սահմանային Անվտանգության և Պետական Սահմանի Միասնական Կառավարման Ռազմավարության Գործողությունների Պլանը պետք է սկսի գործել մինչև 2015թ. վերջը ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի աջակցությամբ՝ արդիականացված պլան տրամադրելու նպատակով՝ մնացած թիրախներին հասնելու համար, բավարարելով ՎՋԵԲ-ի և ԵՆԲ-ի պահանջներին:</p>	<p>Մինչև 2015թ. վերջը:</p>
<p>5. Հիմնվելով Համաշխարհային Մաքսատների Կազմակերպության ուղեցույցների վրա, մշակել և ընդունել Մաքսատների վերաբերյալ միջնաժամկետ ռազմավարություն և այդ ռազմավարության հիման վրա՝ գործողությունների իրականացման պլան, ոչ ուշ, քան 2013թ. դեկտեմբերի 31-ը:</p>	<p>Մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ը:</p>
<p>6. Սկսել ժամանակավոր ընդունման մասին 1990թ. հունիսի 26-ի Ստամբուլի Կոնվենցիային միանալու հարցի քննարկումը:</p>	<p>Մինչև 2015թ. դեկտեմբերի 31-ը:</p>
<p>7. Միանալ ՄԱԿ-ի՝ ADR Կոնվենցիային («Վտանգավոր ապրանքների միջազգային տեղափոխումը ճանապարհով»):</p>	<p>Մինչև 2015թ. դեկտեմբերի 31-ը:</p>

<p>8. Միանալ Համաշխարհային Մաքսատների Կազմակերպության (ՀՄԿ) վերանայված՝ Մաքսային ընթացակարգերի հեշտացման և ներդաշնակեցման մասին Կիոտոյի Կոնվեցիային:</p>	<p>Մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ը:</p>
--	--------------------------------------

**ՀԱՎԵԼՎԱԾ 4 – ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ**

	<b>Գործողություն</b>	<b>Ռիսկեր Պարտավորություններ /Շահեր</b>	<b>Ներդրումային կարիքներ /Ռեսուրսներ</b>	<b>Ժամանակա ցույց</b>	<b>Հաջողակ իրականացման համար թիրախների և գնահատման չափորոշիչներ</b>
ԿՊ 1	<p>Մշակել և իրականացնել Բնապահպանական Կառավարման Համակարգ: Շինարարական պայմանագրերը պետք է ներառեն պահանջ, որը պարտադրում է համապատասխանություն ՎՋԵԲ-ի՝ Բնապահպանական և Սոցիալական Քաղաքականությանը (2008թ.) և դրա հետ կապված Կատարողականի բոլոր Պահանջներին:</p> <p>Նախքան շինարարության սկիզբը, պատրաստել կամուրջների կառուցման յուրահատկություններ հաշվի առնող բնապահպանական և սոցիալական ուսումնասիրություն, համաձայն ՎՋԵԲ-ի՝ Կատարողականի Պահանջների, և ներկայացնել այն՝ Բանկի կողմից վերանայման համար:</p>	<p>Բնապահպանական կառավարման օպտիմիզացիա՝ ֆորմալ համակարգի միջոցով:</p>			<p>Մշակվել և իրականացվել է Կառավարման Պլան: Բնապահպանական և Սոցիալական ուսումնասիրությունը ավարտվել և վերանայվել է ՎՋԵԲ-ի կողմից, մեղմացման միջոցները ձեռնարկվել են:</p>

	<b>Գործողություն</b>	<b>Ռիսկեր Պարտավորություններ /Շահեր</b>	<b>Ներդրումային կարիքներ /Ռեսուրսներ</b>	<b>Ժամանակա ցույց</b>	<b>Հաջողակ իրականացման համար թիրախների և գնահատման չափորոշիչներ</b>
	<p>Կամրջի կառուցման համար մրցույթի փաստաթղթերը պետք է ներառեն 1) աշխատանքային տարածքներ, որոնք հատկացված են շինարարական նյութերի պահեստավորման համար և տարանջատված տրանսպորտային ուղիներ, որպեսզի կամուրջ կառուցող կապալառուն կարողանա մուտք գործել դեպի շինհրապարակ (Հայաստանի և Վրաստանի շինհրապարակներում ըստ անհրաժեշտության), 2) սերտ համագործակցություն Բագրատաշենի կամրջի նախագծման և կառուցման համար վարձակալված Կապալառուի և Բագրատաշենի սահմանային անցակետի նախագծման և կառուցման համար վարձակալված Կապալառուի միջև, 3) պահանջ, որպեսզի կապալառուն ձեռնարկի բոլոր խելամիտ միջոցները՝ կանխարգելելու շինարարական և քանդման նյութերի արտանետումը գետի ջրանցքի մեջ, 4) պահանջ, որպեսզի առկա կամրջի քանդման արդյունքում առաջացած բոլոր բեկորները հեռացվեն դեպի տեղական իշխանությունների կողմից հաստատված աղբանոց, 5) նոր կամրջի նախագծի մեջ, հոսքային ջրանցքի ներսում յուրաքանչյուր ալեհերձ պետք է ունենա գետի ջրանցքին զուիագեռ դիրք՝ էրոզիայի ռիսկը նվազեցնելու նպատակով:</p>	<p>Ապահովել, որպեսզի կամրջի կառուցման հետ կապված ռիսկերը բավարար կերպով կառավարվեն:</p>			<p>Պահանջները պետք է ներառված լինեն շինարարության համար մրցույթի փաստաթղթերի մեջ:</p> <p>Կապալառուն պետք է իրականացնի իր գործունեությունը:</p>
ԿՊ 2	<p>Մշակել և իրականացնել Մարդկային Ռեսուրսների և Աշխատանքի Կառավարման Պլան, որը պետք է ներառի Աշխատողների համար Բողոքների Ներկայացման Ընթացակարգը:</p>	<p>Ստեղծել ապահով աշխատանքային միջավայր աշխատակիցների համար:</p>			<p>Մարդկային Ռեսուրսների և Աշխատանքի Կառավարման Պլանի մշակում և իրականացում, Բողոքների Ընթացակարգերի կիրառում:</p>

	<b>Գործողություն</b>	<b>Ռիսկեր Պարտավորություններ /Շահեր</b>	<b>Ներդրումային կարիքներ /Ռեսուրսներ</b>	<b>Ժամանակա ցույց</b>	<b>Հաջողակ իրականացման համար թիրախների և գնահատման չափորոշիչներ</b>
	Մշակել և իրականացնել Մասնագիտական Առողջապահության և Անվտանգության Պլան, որը ներառում է շինարարության վերաբերյալ Վերապատրաստման Ծրագիր: Այն պետք է ներառի միջոցառումներ՝ նվազեցնելու աշխատողների՝ աղմուկին և օդի աղտոտվածությանը ենթարկվելը:	Ստեղծել ապահով աշխատանքային միջավայր աշխատակիցների համար:			Մասնագիտական Առողջապահության և Անվտանգության Պլանի մշակում և իրականացում:
ԿՊ 3	Մշակել և իրականացնել Թափոնների Կառավարման Պլան, ներառյալ դրույթներ՝ Դեբեդ գետի և շրջակա տարածքների վրա ազդեցությունը նվազեցնելու մասին: Քանդման թափոնների նետման վայրը պետք է կոնկրետացվի և համաձայնեցվի Տեղական Իշխանությունների հետ:	Նվազեցնել շրջակա միջավայրի վրա ազդեցությունը թափոնների պատշաճ կառավարման միջոցով:			Թափոնների Կառավարման Պլանի մշակում և իրականացում:
	Մշակել ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման պլան՝ նվազեցնելու ստորերկրյա/գրունտային ջրերի աղտոտումը: Այն պետք է ներառի տեխնիկական սպասարկման ժամանակացույց, վառելիքի լցավորման և վառելիքի, շարժիչների յուղերի և քսանյութերի պահեստավորման համար համապատասխան տարածքների/վայրերի որոշում:	Նվազեցնել ստորերկրյա/գրունտային ն ջրերի գրունտային ջրերի աղտոտումը:			Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման պլանի իրականացում:
ԿՊ 4	Մշակել երթևեկության կառավարման պլան շինարարության ժամանակահատվածի համար:	Ապահովել բոլոր կապալառուների համար համապատասխան մուտք դեպի շինհրապարակ: Նվազեցնել տեղական համայնքի վրա բացասական ազդեցություն թողնելու հավանականությունը:			Երթևեկության կառավարման պլանի մշակում:

	<b>Գործողություն</b>	<b>Ռիսկեր Պարտավորություններ /Շահեր</b>	<b>Ներդրումային կարիքներ /Ռեսուրսներ</b>	<b>Ժամանակա ցույց</b>	<b>Հաջողակ իրականացման համար թիրախների և գնահատման չափորոշիչներ</b>
ԿՊ 5	Պարզել, արդյոք կամրջի կառուցման համար անհրաժեշտ է կատարել հողերի օտարում: Եթե այո, ապա պետք է մշակել հողերի օտարման պլան՝ ապահովելու համապատասխանությունը ԿՊ 5-ին:	Ապահովել, որպեսզի հողերի օտարման համար տրամադրվի բավարար փոխհատուցում:			Հողերի օտարման հաստատում կամրջի ծրագրի համար: Վերաբնակեցման պլանի մշակում՝ անհրաժեշտության դեպքում:
ԿՊ 6	Շինարարությունն իրականացնող կապալառուն պետք է ձեռնարկի բոլոր խելամիտ քայլերը հետևյալ նպատակներով. 1) ընտրելու համապատասխան վայրեր դեպի անցակետեր տանող ճանապարհների համար, 2) նվազեցնելու շինհրապարակներում հողի վերին շերտի հեռացումը, 3) վերադարձնել հողի վերին շերտը իր սկզբնական վայր շինարարական աշխատանքների ավարտից հետո, 4) նորից տնկել խոտ/թփեր, եթե դա անհրաժեշտ համարվի կամրջի կառուցման յուրահատկությունները հաշվի առնող բնապահպանական և սոցիալական ուսունասիրության ավարտից հետո, 5) որոշել, թե ինչ միջոցառումներ են հարկավոր՝ կանխարգելելու դեպի անցակետեր տանող ճանապարհների էրոզիան, և 6) վերականգնել ճանապարհները, որոնք այլևս պետք չեն որպես դեպի շինհրապարակ տանող: Նախքան բուսականության հեռացումը, համապատասխան որակավորումներ ունեցող էկոլոգ պետք է հաստատի, արդյոք հեռացվելիք բուսականությունը ներառում է պաշտպանության տակ գտնվող կամ վտանգված որևէ տեսակներ, թե ոչ: Եթե այո, ապա կմշակվի և կիրականացվի կենսաբազմազանության պլան, համաձայն ԿՊ 6-ի:	Մինիմումի հասցնել շրջակա միջավայրի վրա ազդեցությունը:			Էկոլոգի՝ վայրի այցելության վերաբերյալ հաշվետվություն, նախքան բուսականությունը հեռացնելը: Վերականգնման միջոցների իրականացում շինարարության ավարտից հետո:

	<b>Գործողություն</b>	<b>Ռիսկեր Պարտավորություններ /Շահեր</b>	<b>Ներդրումային կարիքներ /Ռեսուրսներ</b>	<b>Ժամանակա ցույց</b>	<b>Հաջողակ իրականացման համար թիրախների և գնահատման չափորոշիչներ</b>
ԿՊ 8	Կամրջի կառուցումը պետք է նախագծվի այնպես, որպեսզի շրջանցվեն մշակութային վայրերը: Տեղական փորձագետները պետք է ուղեկցեն նախագծողին՝ հաստատելու, որ մշակութային արժեք ունեցող վայրերը չեն տուժի նոր կամրջի կառուցման աշխատանքների կամ առկա կամրջի քանդման ընթացքում: Ըստ անհրաժեշտության, շինարարության ընթացքում պետք է մշակվի և իրականացվի պատահական հայտնաբերումների ընթացակարգը:	Մշակութային ռեսուրսների պաշտպանություն:			Հաստատու, որ մշակութային վայրերը չեն տուժի կամրջի կառուցման գործընթացից:
ԿՊ 10	Մշակել և իրականացնել Շահագրգիռ կողմերի Ներգրավման Պլան (ՇՆՊ) կամրջի ծրագրի համար: Այն պետք է ներառի սահմանային անցակետերի ծրագրի հետ սերտ համակարգում և խորհրդակցություններ Վրաստանի իշխանությունների հետ:	Ապահովել բավարար հաղորդակցություն ծրագրի և նրա Շահագրգիռ կողմերի միջև:			ՇՆՊ-ի իրականացում: Վրաստանի իշխանությունների հետ հաղորդակցման ապացույց: